

ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄՐԻԱՆԱ ԲԱԴԻԿՅԱՆ

Հոդվածում ուսումնասիրվում են անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորների ձևաբանական առանձնահատկությունները:

Դարձվածային միավորն իր իմաստային, բառաքերականական և գործառական հատկանիշներով բավարարում է լեզվի ձևաբանական և շարահյուսական մակարդակներին ներկայացվող պահանջները. ձևաբանական մակարդակի արտահայտության պլանում այն առնվազն երկբաղադրիչ միավոր է՝ կայուն բառակապակցություն, իսկ բովանդակության պլանում՝ հասկացություն՝ օժտված բառի բովանդակությանը համապատասխան այս կամ այն խոսքի մասին հատուկ քերականական կարգերով ու գործառություններով¹: Ինչպես պրոֆ. Ջահուկյանն է սահմանում. «Քերականական կարգը ուրիշ կարգի չհանգեցվող, բովանդակության պլանում մեկ կամ ավելի հատկանիշներով հակադրվող և ձևաբանական կամ շարահյուսական միջոցներով արտահայտվող երկու կամ ավելի քերականությաների ամբողջությունն է»²:

Անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքներն օժտված են բայ խոսքի մասի ձևաբանական հետևյալ առանձնահատկություններով: Օրինակ՝ բայի անվանողական բաղադրիչներն օժտված են **հոդի, թվի, սեռի՝** ռուսերենում քերականական կարգերով, իսկ բայական բաղադրիչները՝ **սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի, թվի, հաստատական – ժխտականի** քերականական կարգերով հայերենում, ռուսերենում և անգլերենում և **կերպի քերականական կարգով** ռուսերենում և անգլերենում:

Հոդի քերականական կարգը

Հայերենի՝ անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքներում գոյականը մեծ մասամբ օգտագործվում է առանց որոշյալ հոդի, սակայն կան դարձվածքներ, որոնցում առկա է որոշյալ հոդը, օրինակ՝

¹ Բադիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986, էջ 210. Badikyan Kh. G., Jamanakits hajereni dartsatsain miavornery, Er., 1986, ej 210:

² Джаукян Г. Общее и армянское языкознание, Ереван, 1978, стр. 113.

Պոչը թաղկել (խսկց.) – ճարպիկ, հնարագետ լինել:

Կապը կտրել – Անբարոյական, անառակ դառնալ:

Լավությունը չանցնել – Երախտամոռ լինել, անբարեհամբույր գտնվել:

Անգլերենում չափազանց շատ են այն դարձվածքները, որոնցում գոյականն օգտագործվում է անորոշ հոդով կամ առանց հոդի, օրինակ՝

Have a smooth tongue – Պերճախոս լինել:

Have a long/loose tongue – Շատախոս լինել:

Have a head like a sieve – Տրված լինել:

Have a slow wit – Հնարամիտ չլինել:

Սեռի քերականական կարգը

Բայական դարձվածքներում բայ բաղադրիչները կարող են լինել ներգործական և չեզոք սեռի: Երբեմն չեզոք սեռի բայը կարող է վերածվել ներգործականի, բայց ավելի հաճախ տեղի է ունենում հակառակը: Կան բազմաթիվ բայեր, որոնք սովորական գործածություններում ներգործական սեռի են, դարձվածքի կազմում հանդես գալիս կորցնում են իրենց խնդրառական հատկանիշը և վերածվում չեզոք բայերի, օրինակ, **կտրել** բայը իր բուն իմաստով ներգործական է (ծառ կտրել, թուղթը կտրել), բայց որոշ դարձվածքային միավորներում նրա իմաստը պասիվանում է, բայը գրկվում է խնդիր առնելու հատկանիշից և վերածվում չեզոք սեռի (**առյուծ կտրել, կապը կտրել** և այլն):

Բայի սեռը հաճախ իմաստազատիչ դեր ունի դարձվածքների կազմության մեջ: Այստեղ գործում է չեզոք – ներգործական հակադրությունը: Այս հակադրությունն արտահայտվում է բայ բաղադրիչի սեռափոխությամբ, հիմքերի և արմատների փոփոխությամբ, նաև **տալ** բայի հարադրությամբ:

Հայերենում անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով դարձվածքային միավորների սեռափոխությունն իրականանում է **ցն** սեռանիշ ցուցիչի միջոցով, որի շնորհիվ բայը չեզոքից (անանցողական) դառնում է ներգործական (անցողական), և պահանջվում է կրող խնդիր:

Օրինակ՝

Անանցողական (չեզոք) – **սիրտը քարանալ, սևանալ, մաշել, սառել
աչքը կշտանալ, լիանալ**

Անցողական – **սիրտը քարացնել, սևացնել, մաշեցնել, սառեցնել
աչքը կշտացնել, լիացնել**

Հայերենում որոշ դարձվածքային միավորներում **ց**-ի միջոցով ձևավորված սեռային հակադրությունը վճռորոշ իմաստազատիչ դեր է կատարում.

ավելանալով չեզոք դարձվածքային միավորների բայական գերադաս անդամին՝ սեռից բացի, արմատապես փոխում է նրա իմաստը, օրինակ՝

Աչքը մութնել – Սիրելի դառնալ:

Աչքը մութնել – Հանդիմանել, սխալը մատնացույց անել:

Կան նաև այնպիսի դարձվածքային միավորներ, որոնցում պատճառանիշ **g** -ն իմաստազատիչ դեր չի խաղում, օրինակ՝

Մեջքը պնդանալ – Հզոր պաշտպան ձեռք բերել, հարստանալ:

Մեջքը պնդացնել – Հզոր պաշտպան ձեռք բերել, հարստանալ:

Հանդիպում են նաև դարձվածքներ, երբ **g** ածանցը անցողականության իմաստ չի հաղորդում բային, այլ միայն գործողության սաստկացման իմաստ է հաղորդում, օրինակ՝

Քիթը բարձրացնել – Ամբարտավանանալ, մեծամտանալ:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենում բայական դարձվածքային միավորների **չեզոք** – **պատճառական** սեռային երկատման հակադրությունը կատարվում է նաև բայ բաղադրիչի փոփոխությամբ: Սա նշանակում է, որ միևնույն իմաստն արտահայտելու համար տարբեր արմատներ և հիմքեր են օգտագործվում: Կարելի է առանձնացնել բայերի զույգեր, որոնք մասնակցում են դարձվածքային միավորների **չեզոք** – **ներգործական** երկատման կազմությանը, օրինակ՝ **գալ** – **բերել**, **լինել** – **անել**, **ընկնել** – **գցել**, **դառնալ** – **անել**, **կենալ** – **պահել**, **դուրս գալ** – **դուրս բերել/հանել** և այլ տար-արմատ բայերով:

Օրինակ՝

Երեսը սպիտակ լինել – Պարզերես լինել:

Երեսը սպիտակ անել – Երեսը պարզ անել:

Սիրտը բաց լինել – Անկեղծ լինել, զվարթ, ուրախ լինել:

Սիրտը բաց անել – Անկեղծ լինել:

Բերված օրինակներում առաջին սյունակինը չեզոք սեռի դարձվածքներ են, իսկ երկրորդ սյունակինը՝ ներգործական:

Տալ բայը ևս երբեմն իմաստազատիչ դեր ունի սեռային հակադրություններն արտահայտելու համար: Սակայն անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով դարձվածքների շարքում նման դարձվածքները շատ սակավաթիվ են:

Օրինակ՝ **Ականջները վարձու տալ** – Յրված, անուշադիր լինել:

Հայերենում, ռուսերենում և անգլերենում գործում է **ներգործական – կրավորական** սեռային հակադրությունը, որը նշված լեզուներից յուրաքանչ-յուրում ունի տարբեր դրսևորումներ:

Ռուսերենի բոլոր անցողական՝ ներգործական դարձվածքներն օգտագործվում են ներգործական սեռով, չնայած կարող են օգտագործվել նաև կրավորականով:

Օրինակ՝

Распускать нюни – (III իմաստ) Ցրված լինել, անուշադիր լինել:

Сидеть туча тучей – Մռայլ, վատ, տրամադրության մեջ լինել:

Անգլերենում հիմնականում օգտագործվում են ներգործական սեռով, օրինակ՝

Be in the pink – Վատառողջ լինել (բառացի՝ վարդագույնի մեջ լինել):

Be the limit – Անտանելի մարդ լինել (բառացի՝ սահման լինել):

Be white about the gills – Առողջ տեսք ունենալ:

Որոշ դարձվածքներ կարող են օգտագործվել ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական սեռով, օրինակ՝

Make/pull a sad/wry face – Տխուր տեսք անել:

Show a false face – Երկերեսանի լինել:

Put one's best face – Հմայիչ լինել:

Անգլերենում գործող **ներգործական – կրավորական** սեռային հակադրությունը հիմնականում կախված է դարձվածքի բայ բաղադրիչի անցողական կամ անանցողական լինելուց: Առաջին դեպքում այդ հակադրությունն ունի իմաստազատիչ դեր, իսկ երկրորդ դեպքում դարձվածքները կարող են գործածվել և՛ կրավորական, և՛ ներգործական սեռով, և նրանցում սեռային վերոհիշյալ հակադրությունն իմաստազատիչ դեր չունի:

Հայերենում նույնպես գործում է ներգործական – կրավորական սեռային հակադրությունը, և **վ** – սեռանիշ ածանցը երբեմն ունենում է իմաստազատիչ դեր, սակայն հանդիպում են դարձվածքներ, որոնցում **վ** ածանցի օգտագործումը չի փոխում դարձվածքի իմաստը:

Օրինակ՝

Մեկի ջրին ծավար չգցվել – Անհուսալի, անվստահելի լինել:

Շնորհքը վրայից թափվել (խսկց.) – Շատ շնորհալի լինել:

Յորթ չվանով չկապվել (խսկց.) – Անզուսպ, խենթ լինել:

Հայերենում, ռուսերենում և անգլերենում կարևոր են նաև դարձվածքների բայական բաղադրիչների **եղանակի, ժամանակի, դեմքի և թվի** քերա-

կանական կարգերը, այսինքն՝ բայական դարձվածքային միավորները կարող են ունենալ բայի հարացուցային բոլոր ձևերը: Սակայն երբեմն ամբողջ դարձվածքային կապակցությունը գործածվում է միայն այս կամ այն եղանակով, ժամանակով, դեմքով և թվով: Բայական հինգ եղանակներից ժամանակակից հայերենում դարձվածքային միավորներում առավել բարձր հաճախականություն ունի բայի սահմանական եղանակը, որը խոսողի կողմից հավաստի իրողություններ, եղելություններ է ցույց տալիս, օրինակ՝

Աչքը կուշտ է – Գոհ, անկարոտ:

Մեջքը պինդ է – Հարուստ, ունևոր:

Լեզվի փակ օձի թոյն կա – Չար լեզու ունենալ, կեղծավոր լինել:

Հայերենի հինգ եղանակներին անգլերենում համապատասխանում են երեք եղանակները՝ **Indicative** – սահմանական, **Imperative** – հրամայական և **Subjunctive** – ըղձական:

Երեք լեզուներում էլ առավել շատ են բայի սահմանական եղանակով բաղադրված բայական դարձվածքային միավորները: Սակայն դրանք միշտ չէ, որ ունեն քերականական կարգերի՝ ժամանակի, դեմքի, թվի հարացուցային բոլոր դրսևորումները: Որոշ դարձվածքներ կարող են ունենալ լրիվ հարացույց, սակայն դրանք շատ քիչ են:

Ռուսերենում և անգլերենում անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով դարձվածքային միավորներն օգտագործվում են սահմանական եղանակով:

Օրինակ՝

Родиться в сорочке/ в рубашке – Երջանիկ, հաջողակ լինել:

Садиться в лужу – Հիմար դրության մեջ ընկնել:

Считать ворон – Անուշադիր, ցրված լինել:

Carry/hold big guns – Ազդեցիկ մարդ լինել:

Feel one's oats – (II իմաստ) Ուրախ լինել:

Have a thin skin – Զգայուն լինել:

Ռուսերենում և անգլերենում գործում է նաև **կերպի քերականական կարգը**:

Ռուսերենում հանդիպում են անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով բայական դարձվածքներ, որոնք օգտագործվում են միայն կատարյալ (**совершенный вид**) կամ միայն անկատար կերպում (**несовершенный вид**), սակայն ավելի շատ են այն դարձվածքները, որոնք գործածվում են և՛ կատարյալ, և՛ անկատար կերպում, օրինակ՝

Обрасти/обрастать мохом – Անփույթ տեսք ունենալ:

Разинуть/раскрыть/открыть рот/рты – (III իմաստ) Անուշադիր լինել:

Распустить/распускать нюни – Անուշադիր լինել:

Եթե անկատար կերպով գործածվող բոլոր դարձվածքներն օգտագործվում են ներկա, անցյալ և ապառնի ժամանակներով, ապա միայն կատարյալ կերպով գործածվող դարձվածքներն օգտագործվում են միայն ապառնի և անցյալ ժամանակներով:

Անգլերենում բայական դարձվածքային միավորների մեծ մասը հանդես է գալիս ժամանակային կամ թերի, կամ զրոյական հարացույցով: Եթե հայերենում հանդիպում են երեք ժամանակների հերթագայությամբ հանդես եկող դարձվածքային միավորներ, ապա անգլերենում դրանց թիվը շատ քիչ է:

Պետք է նշել, որ անգլերենում որոշ դարձվածքներ հիմնականում չեն օգտագործվում շարունակական (**Continuous**) և վաղակատար – շարունակական (**Perfect Continuous**) կերպում: Բնական է, որ այդ դարձվածքները չեն կարող կիրառվել նաև այդ կերպերով կազմվող ժամանակաձևերով, սակայն կարող ենք հանդիպել նաև հեղինակային դիպվածային որոշ կիրառությունների:

Օրինակ՝

Feel one's oats – (II իմաստ) Ուրախ լինել:

Have a smooth tongue – Պերճախոս լինել:

Have green fingers – Դալար մատներ ունենալ (բառացի՝ կանաչ մատներ ունենալ):

Անգլերենում որոշ դարձվածքներ օգտագործվում են տարբեր կերպերի ժամանակաձևերով, սակայն հարկ է նշել, որ բայական դարձվածքները, այդ թվում նաև անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով դարձվածքները գրեթե միշտ ժամանակային թերի հարացույց են ունենում, օրինակ՝

Have the fit of the blues – Վատ տրամադրության մեջ լինել: (բառացի՝ կապույտների նույն առիթունով)

Հայերենում հանդիպում են որոշ դարձվածքային միավորներ, որոնք գործածվում են քերականական կարգերի՝ ժամանակի, դեմքի, թվի հարացույցային բոլոր դրսևորումներով, օրինակ՝

Քիթը բարձր պահել, սիրտ չունենալ, կապը կտրել, խոսք ուրել, ածելի լիզել:

Թեև բայական դարձվածքային միավորների կազմում ընդգրկված բայը՝ որպես առանձին բառ, կարող է օգտագործվել բոլոր ժամանակներով, դարձվածքի կազմում ընդգրկված բայը կարող է գործածվել միայն մի քանի ժամանակով:

Հայերենում և անգլերենում ավելի գործուն են թերի հարացույց ունեցող և նույնիսկ մեկ հարացույցով ներկայացող դարձվածքային միավորները:

Դեմքի և թվի քերականական կարգերը նույնպես կարևոր գործոններ են բայական դարձվածքային միավորների ձևավորման համար: Դիտարկվող երեք լեզուներում բայական դարձվածքային միավորների, այդ թվում և անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներ պարունակողների ճնշող մեծամասնությունն օգտագործվում է բայի սահմանական եղանակի եզակի երրորդ դեմքով, ավելի քիչ են երկրորդ դեմքով կիրառվող դարձվածքները, իսկ դիմավոր ձևով գործածվողների դեպքում առաջին դեմք չի գործածվում:

Օրինակ՝

Գրի սևն ու սպիտակը չբարբերել – Գրաճանաչ չլինել:

Կոպեկի վրա դողալ – Խիստ ժլատ լինել:

Հյուրի պես պահել – Անհամարձակ լինել, քաշվել:

Յոթ չվանով չկապվել (խսկց.) – Կատաղի, անզուսպ, խենթ լինել:

Շուն կոպ տալ (գոհկ.) – Փորձված լինել:

Թվի քերականական կարգը սերտորեն կապված է բայի իմաստի հետ և բխում է դարձվածքային միավորի էությունից:

Հայերենի բայական դարձվածքների մեծ մասում բայ բաղադրիչն օգտագործվում է եզակի թվով, շատ հազվադեպ են հանդիպում հոգնակի թվով գործածվող դարձվածքներ: Պետք է նշել, որ դարձվածքային միավորներում արտահայտված ընդհանրացման գաղափարը թույլ է տալիս եզակիով արտահայտել բոլորին վերաբերելու գաղափարը, օրինակ՝ **Քիթը բռնես՝ հոգին կտա** – Շատ նիհար, վտիտ մարդ:

Ռուսերենում թվի քերականական կարգը իմաստագատիչ դեր չունի: Բայ բաղադրիչները կարող են օգտագործվել թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով, օրինակ՝

Оброс/обросли мохом – Անփույթ տեսք ունենալ:

Сидел/ходил/стоял – сидели/ходили/стояли туча тучей – Մռայլ, գայրացած լինել:

Сел – сели на мель – Ծանր, վատ դրության մեջ լինել:

Сел – сели в калошу/залошу – Ծիծաղելի դրության մեջ լինել:

Անգլերենի դարձվածքներում բայ բաղադրիչի թվի քերականական կարգը դիտարկվում է այն դեպքում, երբ բայ բաղադրիչի մի մասը օժանդակ բայ է, բայ հանգույց, կամ լիմաստ բայ՝ օգտագործված սահմանական եղանակի պարզ ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքով, օրինակ՝

Открыл – открыли ром/рты – (V իմաստ) Շատ անուշադիր լինել:

Считал – считали ворон – (I իմաստ) Անուշադիր լինել:

He/she/they/is/are as brown as a berry – Ուժեղ արևահարված լինել: (բառացի՝ հատապտղի պես շագանակագույն լինել)

He/they/makes/make/pulls/pull a sad face – Տխուր տեսք ունենալ (բառացի՝ տխուր դեմք անել):

She/they/has/have (got)/two left feet – Անփույթ լինել (բառացի՝ երկու ձախ ոտք ունենալ):

She/they/is/are/as fresh as a rose – Առողջ լինել, աշխույժ (բառացի՝ վարդի պես թարմ լինել):

Դիտարկվող երեք լեզուներում գործում է նաև **հաստատական – ժխտական** քերականական կարգը: Հայերենում դարձվածքային միավորների ժխտականը կազմվում է՝ բայ բաղադրիչի վրա ավելացնելով ժխտական մասնիկը՝ **չ** կամ **մի**:

Օրինակ՝

Մեկի ջրին ձավար չգցվել (խսկց.) – Անհուսալի, անվստահելի լինել:

Մատը մատին չխփել/ մատը մատին չտալ – Անտարբեր, անուշադիր լինել:

Մի թիզ լինել – մի թիզ չլինել – Շատ փոքր:

Յոթ չվանով չկապվել (խսկց.) – Կատաղի, անզուսպ, խենթ լինել:

Ուրջին հասնող չլինել – Անհամեմատ արագաշարժ լինել:

Կան դարձվածքային միավորներ, որոնք գերազանցապես ժխտական ձևով են օգտագործվում, սակայն կարող են օգտագործվել հաստատական ձևով, բայց այս դեպքում նրանք հանդես են գալիս հարցական նախադասության ձևով, օրինակ՝

Գրի սևն ու սպիտակը չջուկել – Անգրագետ լինել:

Գրի սևն ու սպիտակը ջուկու՞մ էին որ ...

Մաքը մաքին չխփել – Անտարբեր, անուշադիր լինել:

Մաքը մաքին խփու՞մ էին որ ...

Ռուսերենում, ինչպես որ հայերենում, գերակշռում են հաստատական կառույցները: Չնայած կան այնպիսի դարձվածքներ, որոնք օգտագործվում են միայն ժխտականով, օրինակ՝

Быть не из робкого/трусливого десятка – Ուժեղ մարդ լինել:

Быть не из храброго десятка (խսկց.) – Վախկոտ մարդ լինել:

Водой не разольешь – Շատ մտերիմ ընկերներ լինել:

Անգլերենում ևս բայական դարձվածքների մեծ մասը, այդ թվում նաև անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորները, օգտագործվում են հաստատական ձևով, թեպետ հանդիպում են նաև հաստատական – ժխտական հակադրություններ, օրինակ՝

Be not as green as one is cabbage – looking – Այնքան միամիտ ու հիմար չլինել, որքան երևում է (բառացի՝ կաղամբի պես կանաչ լինել):

Հաստատական ձևով օգտագործվելիս նշված դարձվածքները վերածվում են հարցական նախադասությունների, ինչպես որ հայերենում:

Անգլերենում կան որոշ դարձվածքային միավորներ, որոնք ունեն միայն ժխտական ձև:

Not to have (got) a brain in one's head – Անխելք լինել (բառացի՝ գլխում խելք չունենալ):

Կարող են հանդիպել **not** կամ **don't**, որտեղ ժխտական մասնիկը վերաբերում է բային, **no** ժխտական մասնիկը, որը վերաբերում է գոյականին, կամ **never**, որը վերաբերում է մակբային:

Be no better than she should be – Ոչ այնքան բարեսեր լինել:

No hand at smth – Անփորձ լինել:

Not to know A from B – Անգրագետ լինել:

Not quite the clean potato – Մութ անձնավորություն:

There are no flies on – (II իմաստ) Շատ աշխույժ լինել:

Ուսումնասիրվող երեք լեզուներում էլ կան դարձվածքներ, որ կարող են գործածվել և՛ հաստատական, և՛ ժխտական ձևով: Այս դեպքում **not** ժխտական մասնիկը անգլերենում, չ-ն հայերենում և **he**-ն ռուսերենում իմաստազատիչ դեր չունեն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայերենում, ռուսերենում և անգլերենում բայական դարձվածքային միավորները քերականական ամենահարուստ կարգերով ու առանձնահատկություններով են օժտված: Բայական դարձվածքային միավորները նաև գործառության ավելի լայն դրսևորումներով հանդես եկող կառույցներն են: Անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչ-

ներով բայական դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում ունեն կառուցվածքային բավականին հետաքրքիր առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են ձևաբանական մակարդակում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորներն օժտված են բայ խոսքի մասի ձևաբանական հետևյալ առանձնահատկություններով՝ ժամանակի, եղանակի, սեռի, դեմքի, թվի: Նշված ձևերը քննարկում են ինչպես բայական դարձվածային միավորները, այնպես էլ բայերը: Հայերեն, անգլերեն, ռուսերեն՝ անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորներին հատուկ են բայ բաղադրիչի ձևաբանական տարբեր դրսևորումներ:

Բանալի բառեր – բայական դարձվածային միավորներ, ժամանակ, եղանակ, սեռ, դեմք, թիվ:

МОРФОЛОГИЧЕСКИЕ ПРИЗНАКИ ГЛАГОЛЬНЫХ ФРАЗЕОЛОГИЗМОВ, ВЫРАЖАЮЩИЕ КАЧЕСТВА ЧЕЛОВЕКА

МАРИАНА БАДАДЯН

Глагольные фразеологизмы, как и глаголы, имеют следующие морфологические категории: времени, наклонения, залога, лица, числа. Формы названных категорий, принадлежащих всему фразеологизму в целом, определяют организующую роль ГФЕ, как и глаголов. Для армянских, английских и русских глагольных ФЕ, выражающих качества человека, характерно формоизменение глагольного компонента или глагольных компонентов.

Ключевые слова – глагольные фразеологизмы, время, наклонение, залог, лицо, число.

MORPHOLOGICAL TYPES OF VERBAL PHRASEOLOGICAL UNITS CHARACTERIZING A PERSON IN THE ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH LANGUAGES

MARIANA BADADYAN

Verbal phraseological units, just like verbs, have the following morphological categories: tense, mood, voice, person, number. The forms of these categories as well as of the entire phraseology define the organizational role of verbal phraseological units and verbs.

The characteristic feature of verbal phraseological units describing human qualities in Armenian, English and Russian languages is that the verbal components change their form.

Key words – verbal phraseological units, tense, mood, voice, person, number.